



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

26 սեպտեմբերի 2017 թվականի N 153-Ա

**Ս. ՄԻՄՈՆՈՎԱՅԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Ս. Միմոնովայի* անձնական դիմումը՝ կարգադրում եմ.


1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզնիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Սոֆիա Միմոնովային* տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2017 թվականի սեպտեմբերի 26-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ՝ *չորս օր*:

2. *Սոֆիա Միմոնովայի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզնիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ *Ռուսրում Ղազարյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2017 թվականի սեպտեմբերի 26  
ք. Հրազդան



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ